



հայաստան համահայկական հիմնադրամ  
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.  
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

ԽՈՐԱԳԻՐ.

Մարտի 21, 2008 թ.  
Գյուղական զարգացման ծրագրի  
գրասենյակ  
«Հայաստան» համահայկական հիմնադրամի  
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական  
գեկույց

Այս շաբաթ մենք կխոսենք, ինչպես նաեւ կցանկանայինք լսել ձեր կարծիքը «Հայաստան» համահայկական հիմնադրամի Լեռնային Ղարաբաղում իրականացվող ծրագրերի վերաբերյալ, կանդիդատներին ՄԱԿ-ի ընդունած վերջին բանաձեւին եւ այդ հետեւանքով առաջացած քաղաքական մթնոլորտին: Թվերի բաժնում ներկայացվում են գյուղական համայնքների ճանապարհների վերաբերյալ թվեր, որին կցված է ինքնին խոսուս մի փոքր տեսանյութ:

### Հիմա ավելի քան երբեք

Անցյալ շաբաթվա վերջին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց միակողմանի մի բանաձեւ, որում կոչ է արվում անհապաղ Ադրբեջանին վերադարձնել բոլոր այսպես կոչված “գրավյալ” տարածքները: Չնայած ՄԱԿ-ի անդամ պետությունների մեծ մասը, մասնավորապես ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը դեմ արտահայտվեցին, այդուհանդերձ բանաձեւը ընդունվեց հիմնականում Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամ պետությունների աջակցության շնորհիվ:



Այս նոր բանաձեւի արդյունքում Ադրբեջանի կողմից բանակցային գործընթացից հրաժարվելու փորձերի եւ ռազմաշունչ հայտարարությունների լույսի ներքո մեզ համար շատ կարեւոր է գործել միասին, մեր ջանքերը կենտրոնացնելով Ղարաբաղի մեր հայրենակիցներն օգնելու հաղթահարել այսօր իրենց առջեւ ծառայած խնդիրները: Միայն ներսից հզորացնելով երկիրը կարող ենք այն պաշտպանել

արտաքին սպառնալիքներից: Այսօր Ղարաբաղի ժողովուրդը դեռեւս մեծ դժվարությունների առջեւ է կանգնած, որոնց թվում են տարրական ենթակառուցվածքների բացակայությունը, ինչպես նաեւ դեռեւս պատերազմի հետեւանքները կրող շրջանների վերականգնումը:



Սա ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է, սա մարդասիրական նշանակություն ունեցող խնդիր է, սա անվտանգության խնդիր է եւ իվերջո սա համահայկական նշանակություն ունեցող խնդիր է եւ Ղարաբաղի ժողովուրդը գիտի, որ նա մենակ չի կանգնած այս անհաղթահարելի թվացող խնդիրների առջեւ եւ աշխարհով մեկ սփռված ողջ հայությունը օգնության ձեռք է մեկնում Ղարաբաղում բնակվող իրենց հայրենակիցներին, անհաղթահարելի թվացող առաջադրանքներ իրագործելու նպատակով ստեղծված կազմակերպության՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով: Արդեն մեկ տասնամյակից ավելի է, որ Հիմնադրամը կարողացել է լուծել հրատապ լուծում պահանջող բազմաթիվ կարելուր խնդիրներ: Հազարավոր հայեր Հայաստանից եւ սփյուռքից մասնակցել են Ղարաբաղի ժողովրդին աջակցելու գործին:



Այս համահայկական մասնակցության շնորհիվ իրականացվել են Ղարաբաղի զարգացմանն ուղղված հարյուրավոր ծրագրեր, Հյուսիս-Հարավ մայրուղին, որը արդեն իրականություն է դարձել, ինչպես նաեւ բազմաթիվ այլ ծրագրեր, որոնք իրականացման ընթացքում են՝ Ղարաբաղը տանելով կայուն զարգացման ճանապարհով: Եւ այս իմաստով ՄԱԿ-ի ոչ մի բանաձեւ չի կարող

փոխել մեր հիմնական առաքելությունը, որը օգնության կարիք ունեցող հայերին օժանդակելն է, եւ այսօր ավելի քան երբեւիցե պետք է ցույց տանք մեր վճռականությունը եւ մեր աջակցությունը ցուցաբերենք Ղարաբաղի ժողովրդին:

Մենք կցանկանայինք լսել նաեւ ձեր կարծիքը Ղարաբաղում իրականացվող ծրագրերի վերաբերյալ: Խնդրում ենք ձեր կարծիքը ուղարկեք մեզ հետեւյալ հասցեով [rdp@himnadram.org](mailto:rdp@himnadram.org):

**Կյանքը թվերով՝ ճանապարհներ**

**90**  
Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի երկարությունը (կիլոմետր)

**16**  
Մինչեւ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի կառուցումը Երեւանից Ստեփանակերտ հասնելու համար անհրաժեշտ ժամանակը (ժամ)

**6**  
Այսօր Երեւանից Ստեփանակերտ հասնելու համար անհրաժեշտ ժամանակը (ժամ)

**169**  
Հյուսիս-Հարավ մայրուղու երկարությունը (կիլոմետր)



**150**

Յյուսիս-Յարավ մայրուղու շտորիիվ իրար կապված համայնքների թիվը

**6**

Տավուշի մարզի հաշթառակի միկրոշրջանում ընդգրկված համայնքների թիվը

**30**

Կիլոմետր ճանապարհի վերանորոգում հաշթառակի միկրոշրջանում

**6**

Լոռու միկրոշրջանում ընդգրկված համայնքների թիվը

**32**

Կիլոմետր ճանապարհի վերանորոգում Լոռու միկրոշրջանում (ակնհայտ է խնդիրների եւ ծավալների նմանությունը)

**1,000,000**

Այսօր համայնքների առջեւ ծառացած խնդիրների թիվը

**1**

Իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ մարդկանց թիվը

Որպես վերջաբան կարող եք տեսնել, թե սահմանամերձ համայնքների բնակիչները ամեն օր ինչ ճանապարհներով են պարտավոր անցնել...

